



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 28 ՍԵՄՏԵՄԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 81

ՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

Ցնծացէք Աստուծոյ, որ մեր պաշտպանն է,
ուրախութեամբ աղաղակեցէք մեր հայրերուն Աստուծոյն:
Լսեցին լեզու մը, որ չէին լսած, եւ որ կ'ըսէ.
«Ես քու ուսեղ վար առի բեռը,
ծեռքերդ ազատագրեցի ստրկական աշխատանքներէն:
Նեղութեանդ մէջ երբ օգնութեան կանչեցիր՝ ազատեցի քեզ,
ամպրոպին մէջէն պատասխան տուի քեզի,
քեզ փորձեցի Մերիպայի աղբիւրին քով:
Լսէ ինչ որ կը պատուիրեն, ով ժողովուրդ իմ,
երանի՛ թէ լսես ինձի, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ:
Չըլլայ բնաւ, որ օտար աստուածներ ունենաք,
եւ չըլլայ որ սուտ աստուծոյ մը երկրպագութիւն ընէք:
Ես եմ քու Տէր Աստուածդ, որ Եգիպտոսէն դուրս հանեցի քեզ:
Լայն բաց բերանդ, եւ պիտի կերակրեն քեզ:
Բայց ժողովուրդս մտիկ չըրաւ իմ կոչս, Իսրայէլ չուզեց ինձի հնազանդելի:
Ուստի ձգեցի, որ մնան իւրեանց յամառութեան մէջ,
եւ ընեն ինչ որ իրենց կամքը կ'ուզէ»:

ՇԱՐՄԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ
✠
ԵԼԻՅ ԼԲ (32) ԳԼՈՒԽ
✠

ՈՄԿԻԷ ՀՈՐԹԸ (32:1-35)

Այս բաժինը կը ներկայացնէ հիմնականին մէջ Աստուծոյ առաջնորդութիւնը: Կը ներկայացնէ ժողովուրդին վիճակը Մովսէսի բացակայութեան: Մովսէսի բացակայութիւնը պարճառող կը դառնայ որ ժողովուրդը դժգոհի, պահանջք ներկայացնէ Ահարոնին, որ իրենց համար աստուածներ շինէ, որպէսզի անով առաջնորդուին: Սա կը նշանակէ, թէ իրենց համար պարզապէս երկրաւոր առաջնորդ մը ունենալը բարար չէր, անոնք միայն Մովսէսի վարակեցող չէր որ ճամբայ ելան՝ այլ՝ Աստուծոյ, որովհետեւ Մովսէս Աստուծոյ անունով ներկայացաւ իրենց: Հիմա այդ ներկայացուցիչը չկայ:

«Երբ ժողովուրդը քետաւ, որ Մովսէս ուշացաւ լեռնէն իջնելու, Ահարոնին քով հաւաքուեցան ու ըսին. "Ելիր, մեզի աստուածներ շինէ, որպէսզի մեր առջեւէն երթան, որովհետեւ Մովսէսը, մեզ Եգիպտոսէն հանող մարդը, չենք գիտեր թէ ի՞նչ եղաւ"»: Այսպէս արհամարհական արտայայտութիւն մըն է որ կ'ունենան Մովսէսի նկատմամբ, եւ անուղղակիօրէն իրենց անվարակալութիւն յայտնաւորելու կ'ըլլան Աստուծոյ հանդէպ, որովհետեւ Ան խոստացաւ իրենց երկիր մը հասցնել, բայց Անոր ընտրած առաջնորդը չկայ: Ուրեմն այդ Աստուածը իրենց փրկիչը չէ, եւ կամ՝ փկար Աստուած մըն է: Այս իսկ պարճառով կ'ուզեն ուրիշ աստուածներ ունենալ: Այդ «աստուածներ» ունենալու ցանկութեան մէջ, մի գուցէ անոնց մտքին մէջ կային այս եգիպտական չաստուածութիւնները, որոնց ծանօթ էին, իսկ թէ անոնք կը պաշտուէին Իսրայէլացիներու կողմէ, չենք գիտեր, բայց մէկ բան որոշ է, որ իրենք կ'ուզեն ունենալ ուրիշ աստուածներ:

«Ահարոն ըսաւ. "Բերէք ձեր կիներուն, տղաքներուն եւ ձեր աղջիկներուն ոսկի օղերը": Անկա առաւ քանդակեց եւ ձուլածոյ հորթ մը շինեց»: Այսպէս Ահարոնի ըրած արդարանալի չէ, որքան ալ ան իր մտքին մէջ ունենար, որպէս ճշմարիտ Աստուծոյ մը պարկերացումը, բայց արդէն խախտած էր Աստուծոյ իսկ փրկած պարտաւորանքը, որ կուռքեր չշինես: Առաւել եւս, Ահարոն կը յայտարարէ որպէս Տօն, այս պարագային ծիսական, այսինքն՝ պաշտամունք: Եւ ահա ժողովուրդը ըսաւ. **"Ով Իսրայէլ, ասոնք են քու աստուածներդ, որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին"»: «Երբեք առաւօտ կանուխ ելան ու ողջակէզներ մարուցանեցին եւ խաղաղութեան գոհեր բերին եւ ժողովուրդը ուրելու եւ խմելու նստաւ ու խաղալու ելան»:** Այսպէս այս արտայայտութիւնները կը յիշեցնեն այն ինչ որ եգիպտոսի եւ քանանու երկրի բնակիչները կ'ընէին իրենց պաշտամունքներու ընթացքին, այսինքն՝ անառակութիւն: Այդ իսկ պարճառով Աստուած զանոնք կը կոչէ «խստապարանոց», որ կը նշանակէ յամառ կամ անուղղայ:

Ի քետ այս երեւոյթին, **«Տէրը ըսաւ Մովսէսն. "Գնա՛, իջի՛ր, որովհետեւ ապականեցաւ քու ժողովուրդը: Անոնք շուրջով խոտորեցան այն ճամբայէն, որ իրենց պարտաւորեցի»:**

«Մովսէս իր Տէր Աստուծոյն առջեւ աղաչեց ու ըսաւ. "Ով Տէր, ինչո՞ւ քու բարկութիւնդ բորբոքի քու ժողովուրդիդ վրայ: Դարձիր քու սաստիկ բարկութենէդ ու դադրիր այս չարիքը քու ժողովուրդիդ վրայ բերելէ: Յիշէ քու ծառաներդ՝ Աբրահամը, Իսահակը ու Իսրայէլը, որոնց դուն քու անձովդ երդում ըրիր ու ըսիր անոնց. Ձեր սերունդը աստուծոյ պէս պիտի շարժեն»: Այս ամբողջ հարուածին մէջ հետեւեալը ցոյց կու տայ, Աստուծոյ զայրոյթը, միւս կողմէ Մովսէսի կեցուածքը: Աստուծոյ եւ Մովսէսի միջեւ մտերմութեան կապը, ու անով Մովսէսի բարեխօսութիւնը, այնպէս ինչպէս որ էր պարագան Աբրահամին Սողոմնի ու Գոմորի ժամանակ:

«Մովսէս անոնց շինած հորթը առաւ ու կրակով այրեց ու մանր փոշի ըրաւ եւ ջուրին վրայ ցանեց ու Իսրայէլի որդիներուն խմցուց»: Ասով սորվեցնելու ժողովուրդին իրենց կարարած մեղքին դառնութիւնը, եւ անդրադառնալու եւ վերադառնալու Աստուծոյ: Տակաւին, հակառակ ժողովուրդին վերաբերմութիւն հանդէպ Մովսէսին, Մովսէս իր ժողովուրդով մտաւորապէս եւ կ'ուզէ անոնց փրկութիւնը, ինքզինք նոյնացնելով անոնց հետ:

Իսկ «Զարէ փախարակներու կոտորուիլը», խորհրդանշականօրէն կը նշանակէ թէ ժողովուրդը իր այդ արարքով խախտեց այդ ուխտը, եւ ժամանակաորակա Աստուծոյ կողմէ ուխտին խզուլը մինչեւ որ Մովսէսի բարեխօսութիւնը ընդունուի եւ քաւութիւն շնորհուի ժողովուրդին, որմէ ետք այդ ուխտը վերանորոգուի նոր քարէ փախարակներով: